

Արաբ Իպն Հաուգալի (Ժ. դար) վկայութեամբ մեծ մասամբ հայ ազդեցութեան տակ էր եւ այդ ատեն իսկ մետաքս կ'արտաձէր, կը գործէր եւ կ'արտադրէր: Ասկէ կը հայթայթէր Արեւելքի եւ Արեւմուտքի բազմատեսակ պահանջները:

Երբ Շահ Արքաս բռնի մեծ դաղթի կ'ենթարկէր այս շրջանի հայութիւնը, բնական է որ անոր բուն արժէքին եւ կարողութեան դիտակցութիւնը ունէր: Բուն երկրէն բռնի տանելով այս մեծապէս ժրջան, արտադրող, մշակողից թարձր հայութիւնը՝ ան դարգացուց Խորասանի տախտատանները, Գիւլանի եւ Մազանդերանի վատառողջ եւ հեռաւոր դաւառները, զարդարեց Սպահանը, Ղազվինը, Շիրազը, Քէշանը, ի դին Երեւանի, Ջուղայի, Նախիջևեանի: Այս բռնադաղթը ոչ միայն զարկ տուաւ Պարսկական աննշան առեւտուրին, այլ եւ արտադրութեանց: Այսպիսով նիւթապէս սպառած Պարսկաստանին վերածնունդի պատճառ եղաւ, երկրի մշակողից զարգացման սատարեց, մինչեւ որ բռնի դաղթուած հայութիւնը սպառեցաւ մոլեռանդ տեղական ալյամբերթութեանց ճնշման տակ:

\* \* \*

Ըսի թէ Շահ Արքաս Մեծէն առաջ արդէն հայոց դերը կենսական եղած էր Պարսկաստանի ներքին կեանքին մէջ:

Ասոր մասին, ղժբախտաբար, քիչ բան գրուած է ցարդ մեր մօտ: Նոյնիսկ եղածն ալ պէտք է վերստին խմբագրել: Կը պակսի Պարսկահայ պատմութիւն մը, որ արժէք ունենայ եւ իր նիւթը բազմակողմանի տեսութեամբ մը համառօտ ներկայացնէ: Հազարաւոր յիշատա-

տադրէր՝ ութը հազար հակ, Խորասան՝ երեք հազար, Մազանդերան՝ երկու հազար, Շիրվան՝ երկու հազար, Գարատաղ երկու հազար, Վրաստան մնացեալը: Ասիկա կը հաւասարի 2,808,000 փառնտի (իւրաքանչիւր հակ 216 փառնտ, իսկ Պարսկաստանի բոլոր արտադրութեան համադումարը՝ 20,000 հակ) Պարսկաստանի ներկայ սահմաններուն մէջ: Շիրվան, Գարատաղ եւ Վրաստան այլեւս անոր մաս չեն կազմեր» (էջ 415)

կարաններ, տապանաքարեր, ձեռագիրներ, հաշուեղբեր կան օգտագործուելիք:

Այդ թանկագին, ամենակարեւոր հաշուեղիրքերն եւ թուղթերը կարեւորագոյն նիւթեր են այսօրինակ աշխատութեանց համար Սահայն, թէ՛ Ալիշան եւ թէ՛ Յովհանեանց ուրիշներու նման զանց առած են հրատարակել զանոնք: Տէր Յովհանեանց կը բաւականանայ ըսելով. «Վաճառք նոցա (Նոր Ջուղայեցոց) եղեալ են ըստ ամենայն նիւթոց իւրաքանչիւր վաճառատեղի քաղաքաց, իսկ երեւելի վաճառականք ըստ մեծի մասին պարապել են ի տուրեւառութիւն մարդարտի, մետաքսի, ազնիւ ցփսեաց եւ դոհարեղինաց:»<sup>1)</sup>

1937-ին Պարսկաստան այցելութեանս ատեն զացի Սպահան, ուր այդ առթիւ լուսանրկարեցի հարիւրաւոր վաւերաթուղթեր Նոր Ջուղայի Ամենափրկչի վանքին դիւանէն եւ ատոնցմէ ես կ'օգտուիմ իմ աշխատութեանցս համար:

1663-ին Վանուսօմցի (Ֆրանսացի) Daulier-Deslandes ուղեգիրը կը վկայէ, որ Թաւրիզի մէջ «մեծ մետաքսի առեւտուր կայ, որ Գիւլանէն կը բերուի... որուն համար մեծ թիւով հայեր եկած են հոս, որոնք հաստատուած են ու խաղաղութեամբ կ'ապրին»:<sup>2)</sup>

Չեմ դիտեր թէ ինչո՞ւ Թաւրիզի հայ եկեղեցիներուն կը պակսի Նոր Ջուղայի դիւանին նման դիւան մը, որ, անտարակոյս, պէտք է գոյութիւն ունեցած ըլլար:

Ժէ դարուն Ջուղայեցի վաճառականները, Ռուսաստանը խոստմնայից հրապարակ մը նըկատելով, սկսան հոն դիմել: Թրքական աւազակարարոյ կայսրութիւնը, ապահովութիւն զլանալով Պարսկահայ վաճառականին, ստիպեց զայն, որ Ռուսաստան դիմէ իր առեւտուրին համար, մանաւանդ որ Ռուս կայսրութիւնը զինքը քաջալերեց: Այդ մասին ունինք փաստաթուղթեր ալ: Օրինակ՝ «Յամի 1667, 31 Մայիսի Այէքսանդր Միխայլովիչ Կայսրն Ռուսաց հրովարտակաւ շնորհեաց արտօնու-

1) Պատ. Նոր Ջուղայի, էջ 165:

2) The Beauties of Persia,— London, 1926, p. 9: